

## Շնորհակալություն

Մեծարգո Ռիտա Սարգսյան

Հարգարժան «Արագիլ» հիմնադրամի տնօրինություն.

Ցանկանում եմ իմ խորին շնորհակալական խոսքը ուղղել Ձեզ այն մեծ ուրախության ու բերկրանքի համար, որ պարզևեցիք մեր ընտանիքին: Հնարավոր չէ առանց երախտագիտության խոսել այն ավանդի մասին, որ դուք եք իրագործում ընտանիքի ու օջախի պահպանման գործում: Ձեր շնորհիվ ամուսնության 13-րդ տարում ես մայրանում եմ: Բառերով դժվար է նկարագրել այն ուրախությունը, որ պարզևեց եք մեզ: Շնորհակալություն Ձեզ Ձեր իրականացրած մասնագիտական մեծ աշխատանքների, հոգատար ու հետևողական վերաբերմունքի համար: Ձեր շնորհիվ ավելի է փառավորվում կնոջ հմայքը, արժեքավորվում, կարևորվում է մայրության դերը:

Հարգարժան Ռիտա Սարգսյան

Դուք վառ ու լուսավոր հետք եք թողնում բոլոր նրանց մեջ, ում պարզևեց եք մայրության բերկրանքը:

Թող վշտի ոչ մի շող չմոտենա Ձեզ, թող ժպիտը անպակաս լինի Ձեր դեմքից, թող հաջողությունները միշտ ուղեկցեն Ձեզ:

Հարգանքներով Ա.Ղ.

Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն